



Հ Ր Ա Մ Ա Ն

«10» 04 2020 թ.

Հ.132-Ա

«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 128-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ.

1. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 2020 թվականի մարտի 16-ի «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացը կազմակերպելու մասին N 128-Ա հրամանի (այսուհետ՝ հրաման) 2-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.
«8) առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողների կուրսային աշխատանքները գնահատել՝ գործընթացը կազմակերպելով 2020 թվականի մայիսի 15-ից մինչև հունիսի 5-ը ընկած ժամանակահատվածում»:
2. Հրամանի 2-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «9) հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների կուրսային աշխատանքները գնահատել՝ գործընթացը կազմակերպելով 2020 թվականի մայիսի 15-ից մայիսի 26-ը ընկած ժամանակահատվածում»:
3. Սույն հրամանի մասին տեղեկացնել բոլոր ֆակուլտետների ղեկաններին:

Ռեկտոր՝

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ